են 2 — 3 դրան «փառքի բարձունի» համար, իսկ 1 դրան էլ ժամկոչն է տանում։

Կնունք։ Սովորաբար ծննդաբերութիւնից 10 — 15 օր յետոյ կատարւում է մկրտութեան հանդէսը։ Գալիս է տատմայրը, լողացնում երեխային, ապա մի սեղանի մէջ ձւածեղ, սեր և հայ գնելով ուղարկում են քաւորի տունը և խնդրում, որ առաւօտեան գայ երեխան գրկելու։ Այդ սեղանը տեղացիները «քաւորասեղան» են կոչում։ Քաւորն էլ առնում է մի գազ չիթ կամ մախմառ՝ երեխային փաթաթելու, մի զոյգ մոմ և միւս առաւօտեան գնում է եկեղեցի։ Տատմայրն էլ երեխային և մի կուժ տաք ջուր վերցնելով ծննդկանի մօտիկ ազգականի մէկի հետ գնում է եկեղեցի. գալիս է քահանան և մկրտում երեխային։ Մկրտութեան խորհուրդը կատարելուց յետոյ երեխային փաթաթում են քաւորի գնած չիթի կամ մախմառի մէջ, ձեռնոցի վրայ գնում և եկեղեցում օրհնելուց յետոյ, երեխան քաւորի գրկում, քահանայի առաջնորդութեամբ, շարական երգելով գնում են ծննդկանի տունը։ Երբ ներս են մտնում, ծննդկանը համբուրում է քաւորի ձեռքը և երեխային առնում նրա ձեռքից, կանգնում, մինչև որ քահանան աւարտում է աղօթքը. ապա հաւաքւածները համբուրում են երեխային և աչքալուս տալիս. — «աչքներդ լուս, հազար տարեկան ըլնի»։ Այնուհետև ծնողները սեղան են պատրաստում և կանչում 20 — 30 տղամարդկանց. հրաւիրւածները շնորհաւորում են, օղի կամ գինի խմելով, ապա ճաշում են և ցրւում։ Դրանից յետոյ գալիս են կանայք, որոնք իրենց հետ բերում են ձու, ձւածեղ, բրշտուք, իւղ, կարագ. նրանք համբուրում են նորածնին և ապա նստում են ճաշի. սեղանի վրայ հրաւիրւած կանանց մի-մի ներկած ձու են տալիս, իսկ քաւորին՝ մի զոյգ գուլպայ և մի փողի քսակ, ապա ճաշում են և ցրւում։

Նորածին երեխայի մայրը մինչև 40 օր պէտք է ծանր գործ չանի և տանից դուրս չգնայ. 40 օրից յետոյ նա մի հայ է գնում ծոցը և գնում է աղբիւրը ջուր բերելու, ճանապարհին ում որ հանդիպում է, հացը նրան է տալիս։